Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Մելինե Ռուշանյան, ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության տնտեսագետ.

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Ալմաթի (Ղազախստանի Հանրապետություն), 2024 թվականի դեկտեմբերի 2-13-ը:

3. Հրավիրող կողմը.

Արժույթի միջազգային հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC).

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Cohort Training on Macroeconomic Analysis and Management» թեմայով աշխատաժողովը միտված էր մակրոտնտեսական անհաշվեկշռվածությունների ախտորոշմանը և համակարգված քաղաքականությունների միջոցով դրանց ճշգրտմանը՝ անդրադառնալով տնտեսության տարբեր հատվածների միջև կապերին և փոխազդեցություններին:

5. Քննարկված թեմաները.

Աշխատաժողովի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1. Մակրոտնտեսական կայունություն,
2. Քանակական վերլուծություն և կանխատեսման մեթոդներ,
3. Իրական հատված և կանխատեսումներ.
   - ՀՆԱ և Ինֆլյացիա,
   - Դեֆլյատոր և Փոխարժեք,
4. Վճարային հաշվեկշռի ընդհանուր բնութագիր և ծանոթություն.

- Արտահանում, ներմուծում, կապիտալի հաշիվ,
- Արտաքին պահուստները և ԱՄՀ-ի դերը,
- Խնայողությունների և ներդրումների մնացորդը,

5. Ֆիսկալ հատվածը և կանխատեսումները.
    - Հարկաբյուջետային հատվածի շրջանակը,
    - Ֆիսկալ հաշվառում,
    - Ֆինանսավորում և պարտք,
    - Կանխատեսման մեթոդներ,
6. Ֆիսկալ քաղաքականություն.
    - Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը տնտեսության վրա,
    - Մակրոտնտեսական ցնցումների ազդեցությունը հարկաբյուջետային դեֆիցիտի վրա,
    - Ինչպես վարել հարկաբյուջետային քաղաքականություն,
    - Ֆիսկալ բազմապատկիչների գնահատում,
7. Դրամավարկային քաղաքականություն և կանխատեսումներ.
    - Դրամական հաշիվներ,
    - Փոխառնչություններ այլ ոլորտների հետ,
    - Կանխատեսման և գնահատման մեթոդներ,
8. Մակրոտնտեսական և հարկաբյուջետային կայունություն.
    - Տնտեսության միջնաժամկետ դինամիկան,
    - Պետական և արտաքին պարտքի կայունությունը,
    - Պարզ միջնաժամկետ շրջանակի նախագծում,
9. Մակրոֆինանսական կայունություն.
    - Մակրոֆինանսական կապերի վերլուծություն և գնահատում,
    - Ֆինանսական խոցելի կողմերի բացահայտում,
    - Մակրոպրուդենցիալ քաղաքականության ուսումասիրություն,
    - Սթրես-թեստավորում,
10. Մակրոտնտեսական ճշգրտումների ծրագրում.
    - Ծրագրի ձևավորում. կայունացման քաղաքականություն և կառուցվածքային

բարեփոխումներ,

- Արտաքին ֆինանսավորման դերը,
- Հարկաբյուջետային քաղաքականություն և մակրոտնտեսական կայունություն,
- Կառուցվածքային բարեփոխումների առաջնահերթությունների սահմանում,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է շնորհանդես՝ Վրաստանի Հանրապետության տնտեսության ախտորոշում: Կիրառելով ներկայացված գործիքակազմը՝ բացահայտվել է տնտեսության արտաքին, ֆինանսական և հարկաբյուջետային հատվածներում առկա իրավիճակը, կուտակված ռիսկերը և ներկայացվել են քաղաքանությունների մշակման առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

Ստորագրությունը, ամսաթիվը:

16 դեկտեմբեր, 2024թ.